մարդ ես, չլինի թէ նաւի եղերն նստիս, այլ
սէրէնին տակն: Զի Արապք նենկաժոռք են·
բայց Հոռոմցոց եւ դուքաքէ յոյժ երկնչին 150
ոպահոց եւ ենկիչէրոց: Եւ զի հողմն սակաւ էր
եւ զեռն որընթաց, կապեցին սէրնին գլուխն
պարան երկայն. եւ եղեալ նաւավարքն ի ցա-
մաք քարշէին զետեղերօքն: Եւ դային մերկ
Արապնին երկու կողմամբ՝ հաց խնդրէին. եւ 155
Հոռմցիք թքաք ձգէին, նոքա փախչէին: Եւ
իբրեւ երեկոյ եղեւ թէմպէհ արին՝ զդաստ լի-
նել, զի հարամզատա են Արապքն եւ խորա-
մանկ: Պատմէր մի ոմն թէ Մի ննջէք· զի ես
երբեմն երթայի Մըսր զետովս այս եւ զիտէի 160
սոցա խորամանկութիւնս· առի զամենայն ինչ
զոր ունէի՝ արծթէ թուր, թամբք, եւ ձիւկան եւ
զչանթաս· եդի զամենայն ի ներքեւս, զէյէրն
ի գլուխս· եւ նեղէի զիս չնիրհել· բայց քունն
յաղթեաց զիս· եւ Արապնին տեսեալ զարծթէ 165
թամբն, մտեալ ի ջուրն՝ եկին կէմին եւ կա-
մէին առնուլ եւ ոչ կարացին զի մի՛ զարթի-
ցեմ· ապա մինն հնարս իմացաւ, եխած զոտից
մեծ բութն· իսկ ես ցաւոյն ի վեր վազեցի· եւ
նոքա առին զթամբն եւ գնացին: Եւ մինչ նա 170
զայն խօսէր՝ մի ոմն սկսաւ ճչել, վայ եւ եղուկ
ասելով· իմացաք որ առին զնա ի ջուրն եւ
խեղդեցին· եւ որոնեալ զտին զքէմէրն ի
մէջքն· զի այն աշխարհն ամէն քամար կու կա-
պեն զրամով· հանին զդրամն եւ զինքն թողին 175
ի վրայ ջրին: Եւ պեղծքն այնպէս լողորդ եւ

149 յարապք: